«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

| | |
|---|---|
| ԹԵՄԱ | Անձնավորություն և գործունեություն |
| ԱՌԱՐԿԱ | Պատմություն |
| ՀԵՂԻՆԱԿ | Ռեգինա Հրանտի Թալալյան |
| ՄԱՐԶ | Կոտայք |
| ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ | Աղավնաձորի միջն.դպրոց |

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……2
Անձնավորություն և գործունեություն……2
Անձի կողմից պատմահասարակական փորձի յուրացման փուլերը։Անձի սոցիալականացումը……7
Գաղափար անձի գործունեության և դրա ձևերի մասին……9
Սոցիալական վարքը և անձի ինքնակառավարման հնարավորությունները……12
Անձի սոցիալական վարքի շեղումները……16
Եզրակացություն……20
Գրականության ցանկ……21

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անձնավորություն և գործունեություն թեման արդիական է բոլոր ժամանակներում:Գործի բերումով արդեն շուրջ 22 տարի է մանկավարժ եմ ,և իմ աշխատանքը անմիջականորեն կապված է մարդ անհատի՝ **աշակերտի** հոգեկան աշխարհի,գործունեության,տարիքային առանձնահատկությունների հետ:Մանկավարժը պիտի նախ և առաջ լինի հոգեբան,քանի որ նրա գործունեությունից է կախված մատաղ սերնդի արժեհամակարգը,հայացքները,սկզբունքները և գործունեությունը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է վեր հանել անձի ,անձնավորության և անհատականության հիմնախնդիրները,անձի կատարելագործման ուղիները:

Խնդիրներն են՝ սահմանել անձ,անձնավորություն,անհատականություն եզրույթները, ուսումնասիրել անձի գործունեության վրա ազդող գործոնները,անձի սոցիալականացումը և սոցիալական միջավայրի ազդեցությունը անձնավորության ձևավորման և զարգացման վրա:

## Անձնավորություն և գործունեություն

**Ընդհանուր գաղափար անձնավորության մասին:**Մարդը ունի հոգեկան,որով արտացոլում է շրջապատող աշխարհը,ճանաչում իրեն ու շրջապատողներին:Հոգեկանը ունի ակտիվության մակարդակներ,որ մարդու գլխուղեղն իր ֆունկցիաներով կարգավորում ու կառավարում է նրա վարքն ու գործունեությունը:Մարդը հոգեկան մի բարդ կառույց է ,նա կարող է դրսևորել իմացական ակտիվություն,մտածել,հիշել ,երևակայել,զգալ,հուզվել,ապրել,մտնել հարաբերությունների մեջ շրջապատող մարդկանց հետ,ընդունել նրանց ազդեցությունը և ազդել նրանց վրա,ստեղծել,կազմակերպել և վերափոխել կյանքն ու սոցիալական միջավայրը:Այս բոլորի կրողը մարդու անձնավորությունն է,քանի որ նա է՝թե մեր նվաճումների,բարի,արդար գործերի ու ջերմ հարաբերությունների և թե սխալ արարքների,անբարո վարքագծի,տխուր բարքերի,սնանկ,անպտուղ գաղափարների,մերժելի հայացքների հեղինակը:Ելնելով անձնավորության հոգեկան որակներից մեն բնութագրում ենք նրան,նրա վարքը,գործունեու-

թյան ոճը և այլն:Առօրյա կյանքում մենք հաճախ <<անհատ>>,<<անձնավորություն>> և <<մարդ>> հասկացությունները նույնացնում ենք,քանի որ մարդ ասելով ընկալում ենք անձնավորություն,ըստ այդմ էլ սխալ գնահատականներ տալիս:

**Փիլիսոփայության մեջ անձնավորությունը հասարակական անհատ է նրա սոցիալական որակների տեսանկյունով,որոնք ձևավորվում են պատմականորեն կոնկրետ գործունեության ձևերի հասարակական հարաբերությունների գործընթացում:**

Անձի բնական հիմքը կազմում են կենսաբանական առանձնահատկությունները,բայց անձի զարգացման հիմնական գործոնները ոչ թե նրա բնածին որակներն են,այլ սոցիալապես արժեքավոր որակները :Ելնելով այս հանգամանքից փիլիսոփաները ամբողջացնում են անձի սահմանումը՝ **այն մարդու մտավոր,սոցիալ-մշակութային և բարոյականային որակ-ների դինամիկ,հարաբերականորեն կայուն և ամբողջական համակարգ է,որն արտահայտվում է նրա գիտակցության և գործունեության անհատական առանձնահատկություններում:** Անձի դինամիկան երևում ե նրա անընդհատ հարաճուն զարգացման մեջ,մինչև խոր ծերություն մարդը մտածում է հմտությունների ձեռք բերման, եղածը կատարելագործելու և տարբեր իրավիճակներում ելքեր փնտրելու մեջ:Պատահական չէ,երբ տեղի ունեցավ 1988-ի Սպիտակի երկրաշարժը,որին հաջորդեցին մութ ու ցուրտ տարիները ,և Հայաստանը հայտնվեց շրջափակման մեջ,մեր մեծահասակները,որոնք արդեն սովորել էին բավականին բարվոք կյանքի,շատ արագ վերադասավորեցին իրենց կյանքը և երիտասարդների սովորեցնելով իրենց հմտությունները այդ պայմաններում ապրելու, առաջնորդեցին նրանց և օգնեցին հաղթահարել այդ փուլի դժվարությունները:Կյանքի պայմանների փոփոխության հետ փոխվում են նաև մարդու անձնային որակները:Այդ որակները ելնելով որոշ իրավիճակներից կարող են փոխվել դեպի լավը և դեպի վատը:Այսօր կյանքը շատ մարտահրավերներ է բերում,մի կողմից մարդիկ դառել են ավելի պրպտող ու նախաձեռնող,մյուս կողմից՝ ավելի նյութապաշտ,որը չի խոսում մարդու լավ որակների մասին:Յուրաքանչյուր նորածին երեխա անձ է,սակայն դեպի անձնավորություն ճանապարհը մարդն անցնում է սոցիալական միջավայրում,հենց այդ միջավայրով է պայմանավորված մարդու սոցիալականացման մակարդակը,արժեքային համակարգը ,հմտություններն ու կարողու-թյունները:Անձ-անձնավորություն ճանապարհը անհնար է առանց հասարակական շփումների ,հաղորդակցման և

համագործակցության:Որպես սոցիալական հարաբերություն-ների սուբյեկտ/կատարող/ անձը բնութագրվում է ակտիվ և ստեղծագործական գործու-նեությամբ,որը հնարավոր և արդյունավետ է դառնում նախորդ սերունդներից ժառանգված մշակույթի տիրապետման,յուրացման շնորհիվ:Անձի համարժեք բնութագրման համար շատ կարևոր են արժեքային կողմնորոշումները և դիրքորոշումը:

**Անձը որպես գործունեության օբյեկտ և սուբյեկտ:** Հայ անվանի հոգեբան Բ.Գ.Անանևը գտնում է,որ անձը հասարակական անհատ է,պատ-մական գործընթացի օբյեկտ և սուբյեկտ: Օբյեկտը և սուբյեկտը փիլիսոփայական հաս-կացություններ են:Սուբյեկտ (subjektum) լատիներեն նշանակում է ենթակա- կատարող,գործող, իսկ օբյեկտ ( objektum) –առարկա, որին ուղղված է ենթակայի (սու-բյեկտի) գործունեությունը: Անձը հասարակական- պատմական երևույթ է,այդ պատճառով էլ նրա բնութագրերում առավել լայնորեն բացահայտվում է մարդու հասարակական էությունը:Տվյալ պատմական ժամանակահատվածի , տվյալ շրջանում մարդու կեցության, գոյության համար ստեղծված պայմանների ամբողջությունն է որոշում մարդու անձի ձե-վավորումն ու զարգացումը, նրա սոցիալական և բարոյահիրավական նկարագիրը:Ճիշտ հասկանալու համար վերլուծենք մեր կյանքը:

Այժմ էլ մեր կողքին կյանքը ծնել է և մեր կողքին ապրում են այնպիսի անձինք, որոնք մեր ազգի պատմության մեջ տխուր էջեր են արձանագրելու, նրանք անձնականը գերադասում են ազգային և համամարդկային շահերից, և թույլ են տալիս սխալներ, որոնք խոչնդոտում են մեր անկախ պետականության պահպանմանը և կայացմանը:44 օրյա պատերազմի ժամանակ մենք ականատես եղանք և աննկուն սխրանքների ,և ստոր դավաճանությունների:Իհարկե, մենք էլ քննարկում ենք նրանց արարքները, մեղադրում, կարծիք կազմում: Մեր ստացած գիտելիքները արդեն բավարար են թեկուզ պարզագույն հոգեբանական վերլուծությունների,հոգեբանորեն մտածելու համար:Հոգեբանական վերլուծությունը մեզ ցույց կտա,որ այդ մարդիկ ի սկզբանե չունեին այն որակները, որոնք դրսևորվեցին,որոշ փոփոխություններ տեղի ունեցան ժամանակի և հանգամանքների բերումով, մեզ հայտնի պատմական իրադարձությունների շնորհիվ:Այսինքն՝ մարդը իր ժամանակների և հասարակական հարաբերությունների արդյունքն է:

Այսպիսով՝ **անձը պատմական գործընթացի օբյեկտ է:**Մենք նույնպես և՛ կրթության, և՛ դաստիարակության օբյեկտ ենք: Դիցուք,մենք մանկավարժի գործունեության օբյեկտ ենք, որովհետև մեզ է ուղղված նրա կրթական, դաստիարակչական, ուղղիչ-վերադաստիարակ-չական ներգործությունը,որի նպատակը մեր անձի ճիշտ ձևավորումն է:Այս կանոնակարգված ներգործությունները հասարակական պահանջ է,ազգային նկարագիրը պահպանելու անհրաժեշտություն է, այլ ոչ թե ոմն մանկավարժի անձնական նախաձեռ-նություն կամ քմահաճույք:Այդ ներգործությունները կանոնակարգված են մանկավարժի մասնագիտական պարտականություններում,և աշակերտը կամ ուսանողը պիտի ընդու-նի,որ ինքը դրանց օբյեկտն է:Երբ ծնողը հոգ է տանում երեխայի մասին,զբաղվում է նրա դաստիարակությամբ, ուղորդում է նրա բոլոր անվտանգ քայլերը ,այս պարագայում ծնողի ներգործության օբյեկտը երեխան է:

**Սուբյեկտը,**մարդը,գործող,աշխատող,ստուգող, ստեղծագործող անձն է:

Սուբյեկտի հիմնական գործառույթներից մեկը օբյեկտի ակտիվ վերափոխումն է,նրա «մարդկայնացումը», ավելի մատչելի հոգեբանական լեզվով՝ սոցիալականացումը: Մեր օրինակում մանկավարժը գործունեության,մանկավարժական ներգործության իրակա-նացման **սուբյեկտն** է, իսկ նրա **օբյեկտը** աշակերտն է: ԵՎ ուրեմն նորածին երեխան դաստիարակության և զարգացման օբյեկտ է,ապրելով հասարակության մեջ ձեռք է բերում համամարդկային փորձն ու հմտությունները ,և ինքն է նոր սերնդի համար դառնում սուբյեկտ:Պատմական փորձի, պատմական մշակույթի ,մեր էթնիկական արժեքների յուրացումը այն պարտադիր նպայմաններն են,որոնց շնորհիվ անձը դառնում է անձնավորություն, հետևաբար և գործունեության օբյեկտ ու սուբյեկտ, և ինքը ստեղծում նոր պատմամշակութային արժեքներ:Իսկ այժմ ձևակերպէնք մի բանաձև՝

**«Մարդը ծնվում է որպես անհատ»,«Անձնավորություն դառնում են», «Անհատականությունը պաշտպանում են»:**

**Անհատ (ինդիվիդ ),անձ, անհատականություն, մարդ: «Մարդ»** հասկացությունը առավել ընդհանուր է :Երբեմն այդ անվան տակ միաժամանակ հասկանում ենք **անհատ, անձնավորություն և անհատականություն հասկացությունները:**

«Մարդը» կենսաբանական- սոցիալական էակ է,ունի հոդաբաշխ խոսք,գիտակցություն, բարձրագույն հոգեկան ֆունկցիաներ ( մտածողություն ,հիշողություն,երևակայություն,կամք և այլն),ընդունակ է ստեղծելու աշխատանքային գործիքներ և օգտագործել դրանք հասարակական գործունեություն ծավալելիս:Այս բոլոր հատկությունները մարդը ձեռք է բերում կյանքի ընթացքում:

**Անհատը կենսաբանական օրգանիզմ է,կենսաբանական տեսակ և այդ տեսակի ընդհանուր գենոտիպային ժառանգական հատկությունների կրողը:**Անհատի ծնունդը իր հետ բերում է անձ- մարդ դառնալու բոլոր նախադրյալները,սակայն առանց սոցիալական միջավայրի,մարդկության կենսափորձի և հասարակության դա անհնար է:Մեզ հայտնի է Քիփլինգի « Մաուգլի» ստեղծագործությունը,սակայն ցավով պիտի նշեմ,որ մեր օրերում էլ հաճախ լքված երեխաները ընկնելով այլ սոցիալական միջավայր (կատուների,շների,գայլե-րի),ձեռք են բերում այդ սոցիումի սովորույթները,և նրանց վերադարձը մարդկային միջավայր դառնում է գրեթե անհնար,իսկ եթե նույնիսկ հաջողվում է,դա շատ կարճ է տևում,այդ անհատները չեն դիմանում նոր միջավայրին:Ի դեպ,կենդանական աշխարհում ամենաանօգնական էակը մարդն է,որն առանց մեծերի գոյատևել չի կարող:

Անվանի ֆրանսիացի հոգեբան Ա. Պիեռոնը մարդու հոգևոր զարգացման գործում սերունդների միջև հաջորդականության երևույթը( մեծը փորձը փոխանցում է փոքրին և այսպես շարունակ) քննարկելով բերում է մի այսպիսի երևակայական իրադրության զավեշտական օրինակ, եթե ավագ սերունդը իր փորձը չփոխանցի կրտսեր սերնդին,ապա ինչ կկատարվի մարդու պատմական զարգացման ընթացքի հետ:Եթե մեր մոլորակը աղետի ենթարկվի,- գրում է Պիեռոնը,- և դրա արդյունքում կենդանի մնան միայն մանկահասակ երեխաները,իսկ ողջ մեծահասակ բնակչությունը զոհվի, ապա թեկուզ մարդկային ցեղը կշարունակի իր գոյությունը,այնուամենայնիվ,մարդկության պատմու-թյունը անխուսափելիորեն կընդհատվի:Մշակույթի գոհարները նույն հաջողությամբ կշարունակեին իրենց ֆիզիկական գոյությունը,բայց նոր սերունդների համար դրանց արժեքը բացատրող,բացահայտող չէր լինի, դրանք այդպես էլ կմնային անմատչելի նոր սերնդին:

Այսինքն՝ պատմության զարգացումը,շարժումը,առաջընթացը անհնար է առանց մարդկային մշակույթի նվաճողների ակտիվ փոխանցման նոր սերնդին՝ առանց կրթության և դաստիարակության:

**Հին աշխարհքը ամեն օր**

**Հազար մարդ է մտնում նոր,**

**Հազար տարվա փորձն ու գործ**

**Ընկնում է ամեն օր:**

## Անձի կողմից պատմահասարակական փորձի յուրացման փուլերը:Անձի սոցիալականացումը

Անձը իր բնույթով ու բովանդակությամբ բազմապլան,բարդ, հակասություններով լի սոցիալ-հոգեբանական մի կառույց է: Անձի կայունությունը,ամուր լինելը,կայուն համոզմունքներ և գաղափարներ ունենալը, խոսքի ու գործի համապատասխանությունը կախված է այն մարդկանցից,ովքեր և դաստիարակում և կրթում են նրան, և ինչ ազդեցու-թյուն ունեն նրա վրա:Ամեն դեպքում հնարավոր չէ տալ մարդու այնպիսի սահմանում,որը ամբողջապես կբնութագրի մարդուն իր բոլոր դրական և բացասական կողմերով:

Հոգեբանության մեջ «անձ» հասկացությունը օգտագործվում է երկու հիմնական նշանակությամբ:Առաջին՝ անձ է համարվում ամեն մարդ,որն ունի գիտակցություն:Նա կոնկրետ մարդ կամ սուբյեկտ է, որը վերափոխում է աշխարհը դրա ճանաչման,ապրման և դրա նկատմամբ վերաբերմունքի հիման վրա:Երկրորդը՝անձ է համարվում այն մարդը,որը հասել է հոգեկան զարգացման որոշակի մակարդակիԱնձի ձևավորման գործընթացը ավելի լավ հասկանալու համար պետք է պատկերացում կազմել մարդու հոգեկան զարգացման փուլերի մասին:Այդ փուլերը բաժանվում են ըստ տարիքային շրջանների: Մարդու հոգեկան զաարգացման շրջաններն են. Մանկիկային շրջան,որն ընդգրկում է ծնված օրից մինչև մեկ տարեկանը,վաղ մանկության շրջան (1-3 տարեկան), նախադպրոցական մանկության շրջան (3-7 տարեկան), դպրոցական շրջան(7-ից 18 տարեկան),որը բաժանվում է երեք ենթաշրջանների՝ կրտսեր դպրոցական տարիք, դեռահասության տարիք,վաղ

պատանեկության տարիք,,բուն պատանեկության տարիք (17-20 տարեկան), երիտասարդության տարիքը(21-ից մինչև 35 տարեկան),հասուն տարիքը (35- ից միչև55-60 տարեկան),ծերունական տարիք (60 և ավելի ):

Յուրաքանչյուր տարիքային շրջան ունի յուրահատուկ հոգեբանական (նաև ֆիզիոլոգիա-կան) բնութագիրը՝ հոգեկան զարգացման բովանդակությունը, հոգեկան զարգացման (հատկապես հոգեկան գործընթացների,հոգեկան հատկությունների) համեմատաբար ընդգծված մակարդակը,շրջապատող աշխարհը և մարդկանց ընկալելու յուրահատկություններն ու հնարավորությունները:Սոցիալական էակ դառնալու համար մարդը ամեն տարիքային շրջանում ձեռք է բերում որոշակի կենսափորձ,գիտելիքներ,հմտություններ և կարողություններ և անցնում մյուս տարիքային շրջան: Սոցիալիզացիայի (անձնավորվելու) ողջ ընթացքն ի վերջո հանգում է նրան,որ անհատը անձ է դառնում ,ձեռք բերելով հասարակական-պատմական փորձը,այնուհետև իր վրա է վերցնում այդ փորձը մատաղ սերնդին փոխանցելու պարտականությունը: Դրա համար էլ մարդու սոցիալականացումը հասարակական-պատմական փորձի յուրացման և օգտագործման տեսանկյունից կարելի է բաժանել երկու հիմնական շրջանի:

**Վաղ սոցիալականացում:Առաջին շրջան:** Այն ընդգրկում է մինչև երիտասարդության տարիքի վերջը,իսկ մյուս շրջանը՝ դրանից հետո ընկած շրջանները:Առաջին շրջանում ձևավորվող անձին նպատակաուղղված ձևով կրթում են ու դաստիարակում:Իհարկե փոքրիկ երեխայի աշխարհը սահմանափակվում է իր մայրիկի և մոտ հարազատների շրջանակներում,երեխայի իդեալը մայրիկն է,հայրիկը,տատիկը,պապիկը,բժիշկը,դաստիա-րակը:1-4-րդ դասարաններում երեխայի գործողությունները նպատակաուղղված են նախնա-կան գիտելիխների ձեռք բերմանը:Միջին դասարաններում գնում է երեխայի սոցիալակա-նացման մի նոր փուլ,երբ ավելի կարևորվում է երեխայի սոցիալական դերը ընկերական շրջապատում,երեխայի համար ավելի կարևոր է իր դիրքը շրջապատում,քան առաջադի-մությունը ուսման մեջ:Շատ հաճախ այս տարիքային խմբում նկատվում է ուսումնական պրոցեսի անկում:Երբեմն ծնողների և ուսուցիչների հետևողական աշխատանքի շնորհիվ պահպանվում է առաջադիմությունը:Միջին դպրոցի վերջում աշակերտների մոտ ի հայտ է

քալիս մասնագիտական կողմնորոշվածություն,փոխվում են իդեալները,արժեքները,նոր նախասիրություններ են ի հայտ գալիս:Ընկերային հարաբերություններում էական է ընդհանուր նախասիրություններըշազգային պատկանելիությունը,որոշ դեպքերում նախ-նական քաղաքական կողմորոշվածություն:18-25-տարեկանում համեմատաբար կայուն սոցիալականացման տարիք է,որի ընթացքում մշակվում են անձի կայուն հատկություն-ները:Ինտեգրացիաի փուլում անձի մեջ ցանկություն է առաջանում հասարակության մեջ իր տեղը գտնելու,հասարակության մեջ ներառվելու համար:

**Երկրորդ շրջանում** մարդն իր սովորածը,ձեռք բերածը հարստացված ձևով հաղորդում է կրտսեր սերնդին:Որպես կանոն այս փուլում տեղի է ունենում սերունդների միջև հակա-սություններ:Այսպիսի մի ժողովրդական թևավոր խոսք կա,եթե երեխատ քեզ քննադատում է կամ ընդդիմանում,ուրեմն ճիշտ ես դաստիարակել:Սերունդների պայքարը հավերժական է,այն եկել է հնագույն ժամանակներից և կլինի հավերժ:Անվանի ազգագիր Բ. ՈՒռլանիսը,որ սերունդների տեսանկյունից երկրի ողջ բնակչությունը կարելի է դիտարկել որպես «շերտա-վոր կարկանդակ»:Ամեն դեպքում այդ « կարկանդակի» մի շերտն է կազմում այն սերուն-դը,որը ծնվում է որոշակի տարում:Այդ շերտերի մեջ ամենացածրը՝ ներքևինը,նորածիններն ու «ծծկերներն » են:Նրանց հետևից գալիս են «չոչ անողները և «ցատկոտողները»:Այնուհետև «կարկանդակի» իրար հաջորդող շերտերը գրավում են առաջին դասարանցիները,ավագ դասարանցիները,հետո էլ աշխատող մարդիկ,որոնք կերակրում են իրենց երեխաներին ու մեծերին: «Կարկանդակի» ամենավերին շերտում գտնվում են թոշակառուները,որոնք արդեն ապրել են իրենց դարը:

**Գաղափար անձի գործունեության և դրա ձևերի մասին**: Մարդու գործունեությունը նրա ակտիվության այն գործընթացն է,որի ընթացքում իրակա-նանում է նրա այս կամ այն նպատակը,դիրքորոշումը իրեն շրջապատող միջավայ-րի,մարդկանց,խմբերի կամ իր առջև ծագած խնդիրների նկատմամբ,որոնք նրան առաջա-դրում է կյանքը:Մարդու գործունեությունը նրա ակտիվությունն է,որը ծնվում է նրա պահանջմունքների հիման վրա:Այստեղ խոսքը մարդու գիտակցված և նպատակային գործունեության մասին է ,որով և մարդը տարբերվում է կենդանական աշխարհից :Հաճախ բնության մեջ մենք հանդիպում ենք այնպիսի հրաշքների,երբ կենդանու ստեղծածի վերջ-նարդյունքը շատ նման է մարդու

նպատակային գործունեությանը:Չենք կարող չհիանալ ժրաջան մեղուների աշխատասիրությամբ,երկաթյա կարգապահությամբ և մեղրամոմի կատարելությամբ: Բայց ինչպես Կ. Մարքսն է ասում ,ամենավատ ճարտարապետն անգամ ամենահմուտ մեղվից տարբերվում է նրանով, որ մինչև մեղրամոմից մեղվի մեղվաբջիջ կառուցելը այն սկզբից կառուցում է իր գլխում (ուղեղում), որովհետև նրա գործունեությունը նպատակաուղղված է:Այսպիսով՝ գործունեությունը մարդու ներքին (այսինքն հոգեկան) և արտաքին( ֆիզիկա-կան, գործնական) ակտիվությունն է ,որն իրականացվում է գիտակցված նպատակով :

Գործունեությունը կարող է լինել անհատական, խմբային, տեսական և գործնական: Գործունեությունը ունի իր դրդապատճառները ( մոտիվացիան) և որոշակի նպատակը , և այն իրականացվում է բազմաթիվ առարկայական և մտավոր գործողությունների շնոր-հիվ:Մարդու գործունեությունը ունի երկու հիմնական կողմ՝ արտաքին և ներքին :

Արտաքին կողմը առարկայական գործունեությունն է , ուրիշի գործողությունները (ինչ-որ բան կառուցելը,ճաշ,տորթ պատրաստելը, նկարելը, կտրել-կարելը, խոսքը, միտքը արտահայտելը և այլն): Մենք այդ գործողությունները տեսնում ենք, յուրացնում և հի-շում,դրանք մեր գլխում մոդելավորում ենք ,մտովի տեսնում ենք դրա արդյունքը: Օրնակ ինչ-որ զգեստ կարելուց առաջ դերձակը մտովի պատկերացնում է զգեստի տեսքը, և մտովի պատկերացնում է ,թե ինչպես պիտի կարի: Այսինքն նախկինում մեր կողմից կա-տարված աշխատանքը գործողությունների դաշտից տեղափոխվում է ներքին հոգեկան պլան:

Այսպիսի անցումը առարկայական (արտաքին ) գործողություններից դեպի ներքին (հոգեկան ) գործունեություն հոգեբանության մեջ կոչվում է ինտերիորիզացիա (ներք-նայնացում) ,որը բառացիորեն նշանակում է ներքին վերափոխում: Իսկ երբ դերձակը իր պատկերացրած զգեստը ուզում է իրականություն դարձնել, ինքը ձևում և կարում է նա-խօրոք մտքում ունեցած մոդելի հիման վրա,ապա նա իր ներքին հոգեկան գործունեու-թյունը (մոդելը ) դարձնում է արտաքին առարկայական գործողություններ՝ (զգեստ ) :Այս անցումն էլ կոչվում է էքստերիորիզացիա:Քանի-որ մեր հոգեկանը անընդհատ զարգացման մեջ է,անկախ տարիքային շրջաններից (մեկում մի քիչ ավել,մյուսում՝ պակաս), ապա մենք անընդհատ իրականացնում ենք ինտերիորիզացիայի և էքստերիորիզացիայի գործուղություններ : Դրանց

շնորհիվ ձևավորվում և զարգանում է մեր հոգեկանը և ակտիվությունը:Գործունեության հիմնական տեսակներն են՝ խաղը ,ուսումը , աշխատանքը :Դրանք արտահայտում են մեր տարիքային շրջանները. Մանկություն- դեռահասություն ,պատա-նեկություն- երիտասարդություն և հասուն տարիք :Արդեն նշել ենք,որ յուրաքանչյուր տարիքային շրջան առանձնանում է առաջատար գործունեության տեսակով: Խոսենք դրանց մասին:Մանկիկային շրջանում առաջատար գործունեությունը երեխայի հուզական (էմոցիոնալ) շփումն է ծնողի,մեծահասակների հետ : Այդ ընթացքում երեխան ձեռք է բերում մեծերի հետ հարաբերությունների նորմեր: Վաղ մանկիկության շրջանում առաջատար է համարվում առարկայական գործունեությունը: Երեխան ճանաչում է առարկայական աշխարհը և յուրացնում դրանց հետ շփվելու պատմական փորձը: Նախադպրոցական շրջանում առաջատար գործունեությունը խաղն է,որի միջոցով նա յուրացնում է սոցիալական դերեր և մարդկանց միջև փոխհարաբերություններ: Դպրոցական շրջանի առաջատար գործունեությունը ուսումն է,որի նպատակը մեզ քաջ ծանոթ է: Այս շրջա-նում դեռահասների համար առաջատար է հաղորդակցումը հասակակիցների հետ, իսկ պատանիների համար՝ ուսումնամասնագիտական գործունեությունը, մասնագիտական կողմնորոշումը ,գիտելիքների և ունակությունների յուրացումը :Իրականում մեր ամբողջ կյանքի ընթացքում մեր տարբեր տարիքային խմբերում այս գործունեությունները միա-խառնվում են,երեխան անչափ լուրջ է խաղի ժամանակ,ինչպես գիտնական: Զուգահեռա-բար մենք բոլորս կարող ենք մանկան նման ոգևորվել մեզ գրաված խաղից,իսկ զառամ-յալ ծերունին շատ մեծ սիրով նոր մասնագիտություն կամ գործ կսովորի: Մարդը իր կյան-քի բոլոր փուլերում կատարելագործման,նոր գիտելիքների և հմտությունների ձեռք բեր-ման կարիք ունի,այլապես կառաջանա ճահճացում, որը բերում է մասնագիտական որակների թուլացման,իսկ մեր այսօրվա կյանքում մարտահրավերները շատ են և մըր-ցակցությանը դիմանալու համար անհրաժեշտ է մշտական որակական աճ :Այս ամենի գիտակցումը անմիջականորեն ազդում է մեր գործունեության և վարքի վրա:Իհարկե այս ամենից լինում են նաև բացառություններ:Հենց դրա մասին էլ այժմ մենք կխոսենք:

**Սոցիալական վարքը և անձի ինքնակառավարման հնարավորությունները**: Գաղափար անձի սոցիալական վարքի մասին: Սոցիալական վարքը անձի ընդհանուր սոցիալական ակտիվության դրսևորումներից մեկն է:Սոցիալական ակտիվություն հասկացությունը արտացոլում է անձի գործելու բնույթը սոցիալական խմբում, հասարա-կության մեջ: Այդ ակտիվությունը կապված է այն բանի հետ,երբ անձի հետաքրքրու-թյունները դառնում են ակտիվ գործելու պատճառ, երբ նրա աշխարհաճանաչման ձգտումներն ու նպատակադրումները ուղղվում են իրականության վերափոխմանը: Անձի ակտիվության հիմնական պատճառն այն է ,որ հակասություններ են ստեղծվում նրա կենսապայմանների ու օբյեկտիվ պահանջմունքների միջև,և նա ակտիվանում է այդ անհամապատասխանությունը հաղթահարելու համար: Անձի անհատական ակտիվու-թյունը պայմանավորվում է նրա ուղղվածությամբ,այսինքն պահանջմունքներով, հետաքրքրություններով ,հայացքներով ու համոզմունքներով, իդեալներով:Դրանք մի կողմից՝ հանդես են գալիս որպես անհատական վարքի դրդապատճառներ (մոտիվնր),իսկ մյուս կողմից՝ դրանով որոշվում է անձի յուրատիպ վերաբերմունքը հասարակական գործընթացների նկատմամաբ: Սրանից ելնելով էլ առանձնացնում են անձի սոցիալական ակտիվության չորս կողմեր կամ ասպեկտներ. ա) տնտեսական ակտիվություն, բ) բուն սոցիալական ակտիվություն, գ) քաղաքական ակտիվություն, դ) հոգևոր-գաղափարական ակտիվություն:Մարդու սոցիալական ակտիվության զարգացման գործում մեծ է հասարակության քաղաքական համակարգի դերը:Հասարակության սոցիալական ակտի-վության բարձրացումը ենթադրում է մարդկային լավ որակների և հատկությունների զարգացում և պահպանում:Սոցիալական ակտիվությանը հակադրվում է սոցիալական ապատիան (համընդհանուր անտարբերությունը, ծուլությունը),որն այսօր ցավով պիտի նշեմ բնութագրական է մեր ժողովրդի մի զգալի մասի համար՝ երկրում ստեղծված պատերազ-մական, սոցիալ-տնտեսական և քաղաքական իրադրության պատճառով:

Անձը սոցիալական էակ է,սոցիալական հարաբերությունների արդյունք:Հետևաբար անձը իր դրսևորումն է գտնում իր սոցիալական վարքում:Վարքը նրա արտաքնապես նկատ-վող ակտիվությունն է: Սոցիալական վարքը իրենից ներկայացնում է անձի կանոնակարգ- ված գործողությունների նպատակաուղղված համակարգը, որոնց միջոցով նա իրականացնում է

կապ ու հարաբերություններ շրջապատող մարդկանց, հասարակության հետ: Անձի վարքը միշտ էլ հասարակայնորեն պայմանավորված է և ձևավորվում է գիտակցված, կոլեկտիվ,նպատակադրված, անկաշկանդ ինքնակամ և ստեղծագործական գործունեության մեջ: Սոցիալական վարքի նպատակասլաց գործո-ղությունների կամ նորմերի մեծ մասը մշակվել է մեր նախնիների կողմից և որպես էթնիկական հատկանիշներ փոխանցվում են սերնդից սերունդ:Անձի սոցիալական վարք նշանակում է նաև նրա այն գործողությունները ,որոնք ուղղված են այլ մարդկանց ,հասարակության հանդեպ,որոնք կարգավորվում են բարոյականության հասարակական նորմերի և իրավունքների կողմից:Այս տեսանկյունից մենք հաճախ օգտագործում ենք «ազնվաբարո»,«բարձր բարոյական »,«թեթևամիտ »,«անբարո »,«հանցա-վոր վարք» հասկացությունները ,որոնք միաժամանակ անձի բարոյահոգեբանական նկա-րագիրն են ներկայացնում:Անձի սոցիալական վարքը հաճախ դրսևորվում է նրա արարքներում :Դրանց իրակա-նացման ընթացքում ձևավորվում և դրսևորվում են անձի դիրքը, կենսադիրքորոշումը, բարոյական և իրավական համոզմունքները: Արարքը վարքի անձնային ձևն է,որը առաջանում է ինքնագիտակցության ձևավորման շնորհիվ:

Այսպիսով՝ սոցիալական վարքը անձի կողմից անհատապես իմաստավորված ,անձամբ կառուցված, ծրագրավորված և անձամբ իրականացվող վարք է: Երբեմն այդ վարքը մտնում է հակասության մեջ ընդունված,հաստատված կարգերի հետ և առաջացնում կոնֆլիկտներ (դրանցից մեկը մեզ ծանոթ մեծերի և փոքրերի միջև կոնֆլիկտն է):Որոշ հոգեբանների կարծիքով անձի արարքները օժտված են մի շարք պարտադիր որակնե-րով՝ պատասխանատվությամբ, եզակիությամբ, ինքնատիպությամբ և այլն:Մանկության շրջանում անձը մեծապես ընդօրինակում է մեծահասակի, շրջապատող մարդկանց վարքը, որի կարևոր դերը դեռևս շեշտել է Արիստոտելը: Անձի անհատական գիտակցության զարգացման,դրա մակարդակների բարձրացման հետ իջնում է սոցիալական վարքի ըն-դօրինակման նշանակությունը: Շատ հաճախ «ուժեղ» (ինքնագիտակցության իմաստով) կամք չունեցող անձը հեշտությամբ է դառնում ուրիշի կամակատարը և կատարում բազ-մաթիվ սխալ արարքներ:ԵՎ հակառակը՝ եթե անձի անհատական գիտակցության զարգաց-ման

մակարդակը բարձր է,ապա նա հաճախ ցուցաբերում է սեփական դիրքորոշումը և կամային բնավորության գծեր:

**Սոցիալական դեր և դերային վարքագիծ:**Անձը իր կյանքի, ուսումնական ,աշխատանքային գործունեության ընթացքում կատարում է բազմաթիվ սոցիալական դերեր,հանդես գալիս դերերում:Այդ պատճառով էլ սոցիալական դերերը և դրանով պայմանավորված դերային վարքագիծը անձի սոցիալական վարքի մի վերցրած կողմն է :Դեր հասկացությունը վերաբերվում է այնպիսի սոցիալական իրադրությունների փոխազդեցությանը,որոնց ընթացքում պարբերաբար,երկար ժամանակահատվածում վերարտադրվում են վարքի որոշակի ստերեոտիպեր: Դրանք անձի մտքի ,ընկալումների և վարքի ավանդական, սովորական կանոններ են,որոնք օգնում են մարդուն կողմնորոշվելու վերլուծական մտքի կամ անհատական պատասխանատվությամբ որոշումներ կայացնելու պահանջ չներկայացնող իրադրություններում:

Սոցիալական դերը տվյալ անձից սպասվող հավանության արժանացած վարքի այն նորմատիվ ձևն է ,որի օգնությամբ անձը գրավում է որոշակի դիրք հասարակական և միջանհատական հարաբերություններում: Սոցիալական դերի բնութագիրը ընդգրկում է այնպիսի ցանկություններ և նպատակներ,համոզմունքներ և զգացմունքներ, սոցիալական դիրքորոշումներ,արժեքներ ու գործողություններ,որոնք սպասվում կամ վերագրվում են այն անձին,որը որոշակի դիրք է գրավում հասարակության մեջ:Մարդու սոցիալական դերերը բազմազան են:Սոցիալական իրադրության փոփոխության հետ փոխվում է նաև մարդու սոցիալական դերը:Կարող եմ բերել սեփական օրինակը՝ ընտանիքում ես կատարում եմ կնոջ, մոր, տատիկի դերը ,իսկ աշխատատեղում ես կատարում են ուսուցչի,մեծի, գործընկերոջ դերերը:

Սոցիալական դերը կարող է լիարժեք լինել այն ժամանակ,երբ հայտնի է ,թե ում հետ ,ում համար է այն կատարվում:Անհնար է կատարել ամուսնու դերը,երբ ամուսնացած չես,որդու դեր,երբ ծնողներ չունես, և այսպես շարունակ:

Սոցիալական դերը արտացոլում է անձի սոցիալական վարքն ու տարբեր սոցիալական ֆունկցիաները:Հետևաբար,սոցիալական դերը հասարակության կողմից մշակված մարդու սոցիալական գործողություններն են որոշակի սոցիալական իրադրություններում:

Սոցիալական դերը ենթադրում է դրան համապատասխան սոցիալական վարքագիծ: Սոցիալական վարքագիծը դերով նախատեսված,կանոնակարգված,հասարակական-պատմական փորձով և բարոյաիրավական նորմերով ու իրավաբանական նորմատիվ ակտերով ամրագրված գործուղություններ են,որոնք անձը կատարում է հասարակության պահանջների ու օրինականության սահմաններում:Ստանձնելով որոշակի սոցիալական դեր՝անձը իր վրա է վերցնում սոցիալական որոշակի դերային վարքագծի պարտականութ-յուններ և իրավունքներ:Տարբեր իրավիճակներում մարդը իր սոցիալական դերերը կարող է կատարել տարբեր ձևերով՝բարեխիղճ,օրինական,պատասխանատու, կամ անօրինական, անպատասխանատու,օրինազանց վարքագծով:

Ազնիվ և արդար մարդը գիտակցորեն,լիարժեք է կատարում իր դերային գործողությունները,որովհետև դրանց կատարումից որոշակի սոցիալական սպասումներ ունեն հասարակությունը,«մոտիկ » և «հեռու » մարդիկ: Նա պետք է արդարացնի նրանց հույսերը, չխաբի նրանց: Նա ինքն էլ սոցիալական սպասումներ ունի իր դերից (գրված պաշտոնից, պատասխանատվությունների կատարումից) և սեփական դիրքը հաստատելու ջանքերը և ուրիշների սպասումների արդարացումը դառնում են ակտիվ գործունեության ներքին հզոր դրդապատճառ:Դա օգնում է նրան հաղթահարել բոլոր դժվարությունները նպատա-կին հասնելու համար:Որևէ դերի լավ կամ վատ կատարումը կախված է տվյալ իրավի-ճակի հստակ պատկերացում ունենալուց,և անչափ կարևոր է թե պրոֆեսիոնալիզմը,թե սեփական իրավունքների և պարտականությունների հստակ պատկերացումը:Շատ հաճախ մարդը ստանձնում է նախարարի,ուսուցչի, բժշկի ,օդաչուի և շատ այլ կարևոր կենսական նշանակություն ունեցող դերեր,որևէ պատկերացում չունենալով տվյալ ոլորտի մասին: Այսօր մեր կյանքի բոլոր աղետների հիմքում պրոֆեսոնալիզմի պակասն է:Օրերս Երևան քաղաքի կենտրոնում տեղի ունեցած աղետալի պայթյունը,որը 17-18 կյանքեր խլեց,իմ դիտարկմամբ նույնպես պրոֆեսիոնալիզմի,պատասխանատվության բացակայության հետե-վանք է:Այսօր ամեն ոլորտում,ամեն քայլափոխի,սկսած բարձրագույն կառավարման մար-

միններից՝ հանդիպում ենք ոչ մասնագետ,ոչ կոմպենտենտ անձանց:Որպես կանոն, եթե մարդը հստակ պատկերացում ունի իր պատասխանատվության ոլորտի մասին,նա դժվարությամբ է համաձայնում,կամ չի համաձայնում վերցնել իր ուժերից վեր պատասխանատվություն:Եվ հակառակը՝ հեշտությամբ են համաձայնվում,երբ չեն պատկերացնում այդ ամենի լրջությունը:

Կարգավիճակներ հասկացությունը ցույց է տալիս անձի խմբում ունեցած դիրքը միջանձնային հարաբերություններում և խմբի անդամների վրա նրա հոգեբանական ներգործության չափը:Անձի կարգավիճակը կարող է լինել կայուն, հարաբերականորեն կայուն և անկայուն:Այդ բոլորը կախված կլինի նրանից՝ մնում է արդյոք անփոփոխ նրա հոգեբանական ներգործությունը խմբի վրա, թե ժամանակ առ ժամանակ թուլանում է ,թէ ունեցած դերով է պարտադրված նրա կարգավիճակը,բայց ինքը հեղինակություն չունի:Կարող է անձը միաժամանակ կայուն Ե ոչ կայուն կարգավիճակ ունենալ. Հիմնարկում ունենալ մեծ ներգործություն ենթակաների վրա,իսկ ընտանիքում հարգված չլինել,թույլ ներգործություն ունենալ ընտանիքի անդամների վրա:

**Անձի սոցիալական վարքի շեղումները:**Մարդկային պատմության բոլոր շրջաններին բնորոշ է եղել սոցիալական վարքի թե նորման,սահմանված կարգն ու չափը,թե շեղումները: Անգամ պատմությանըհայտնի են պետություններ,որտեղ մարդկանց սոցիալական վարքի շեղումները այնպիսի մակարդակի են հասել,որ համատարած անբարոյականությունը, այլասերությունը,դաժանությունն ու հանցագործությունները հսկա կայսրության կործան-ման են հասցրել: Այնպես-որ մեր օրերում նկատվող մարդկանց սոցիալական-բարոյական վարքի շեղումները ,հատկապես դրանց առանձին տեսակներ ու դրսևորումներ դարավոր պատմություն ունեն:

Նախ հասկանանք «շեղվող վարք» հասկացության իմաստը:**Մարդու այն սոցիալական գործողությունները, արարքները, գործունեությունը, որոնք չեն համապատասխանում, հակասում են տվյալ հասարակության մեջ ընդունված և գործող վարքի նորմերին, կոչվում կամ համարվում են շեղվող վարք:** Հոգեբանության մեջ վաղուց մշակվել է և այսօր էլ լայնորեն անձի շեղվող վարքի հիմնադրույթը՝ շնորհիվ անվանի հոգեբան Դյուրկհեյմի: Նա

գիտության մեջ մտցրեց անոմալիայի( անկանոն, բնականոնից շեղվող) հասկացությունը, որի միջոցով ցույց տվեց հասարակության վիճակը, որը բնութագրվում է մարդկանց վարքի հստակ բարոյական կարգավորման բացակայությամբ , երբ հին, նախկին նորմերն ու արժանիքները արդեն չեն համապատասխանում հասարակության մեջ ստեղծված իրական հարաբերություններին, իսկ նոր նորմերն ու արժեքները դեռևս չեն հաստատվել(շատ արդիական է մեր օրերում):

Անձի սոցիալական վարքի շեղումները իրենց արտահայտությունն են գտնում նրա տար-բեր անկարգությունների, զանցանքների , իրավախախտումների, հանցագործությունների և այլաբնույթ նեգատիվ դրսևորումների մեջ: Անձի շեղման նախադրյալները դրվում են նրա օնթոգենետիկական զարգացման սկզբնափուլում՝ վաղ մանկության և նախադպրոցական տարիքում և աստիճանաբար խորանում,արմատավորվում են հաջորդ տարիքային շրջան-ներում: Երկու-երեք տարեկան երեխայի կամակորությունները,իր ուզածին ամեն գնով հասնելու ձգտումը,5-6 տարեկանի նեգատիվիզմը(անձի ակտիվ դիմադրությունը մանկա-վարժական ներգործությանը,որը հակասում է իր պահանջմունքներին), ստախոսությունը, բամբասկոտությունը, լկտիությունն ու ցինիկությունը այն հոգեբանական նախադրյալներն են,որոնք կարող են դառնալ հետագայում անձնային որակներ և շեղել անձի վարքը: Այսպես, օրինակ, սկզբնական շրջանում խախտվում, խաթարվում են երեխայի հուզական հարաբերությունները ծնողի հետ, երեխայի հաղորդակցումը ծնողի հետ նրան բավականություն չի պատճառում: Եթե դա հաճախակի կրկնվում է,ապա վաղ և նախա-դպրոցական տարիքային շրջաններում երեխան դառնում է կամակոր, համառ, դրսևո-րում է նեգատիզմ և ծնողների պահանջներին հակառակ գործողություններ կատարում, չլսելու, չկատարելու պատճառով լարվում է նրա հարաբերությունները ծնողի հետ: Այնուհետև նրա վարքը սկսում է անհանգստացնել շրջապատող մարդկանց, ստում է, քծնում,իր մեղքը գցում ուրիշների վրա, խորամանկում է, դառնում կռվարար, կոնֆլիկտային: Դրան հաջորդում է անկարգապահի կարգավիճակի ձեռքբերումը, որից հետո սկսում են բարոյական և իրավական պարզագուճն նորմերի խախտումները, և դրան աստիճանաբար որակապես փոխվում են, խորանում:Եթե կանխարգելիչ դաստիա-րակչական միջոցառումներ չեն յեռնարկվում, և անձը մնում է անպատիժ, ապա փոքր զանցանքը

վերաճում է հետագայում հանցագործության:Ինչպես ժողովրդական իմաստությունն է վկայում «ձու գողացողը ձի էլ կգողանա»՝ շնորհիվ բարձիթողության և անպատժելիության:

Հիմք ընդունելով անձի սոցիալական վարքի աստիճանական (փուլային) շեղման հոգե-բանական օրինաչափությունները՝ պայմանականորեն մենք տարբերում ենք շեղումների հետևյալ ձևերը, որոնք արտացոլում են զարգացման իրար հաջորդող աստիճանները:
**Կարգազանց վարք,**որը բնութագրվում է փոքր, տանելի անկարգություններով:

**Անկարգապահ վարք,** որը վարվեցողության նորմերի խախտումներ է:

**Բարոյազանց վարք,** որն արդեն ընդունված հաղորդակցման բարոյական նորմերի խախտումներ է, բայց հեշտ հաղթահարելի:

**Իրավախախտ վարք,** որի դեպքում ոտնահարվում են իրավունքի նորմեր,բարոյական և այլ բնույթի վնաս պատճառվում ուրիշներին:

**Քրեածին վարք** նշանակում է,որ անձը ունի իրավախախտումներ կատարելու հոգեբանա-կան նախադրյալներ և կարող է կատարել այն իրեն հարմար իրադրություններում:

**Հանցածին վարք,** որը քրեածին վարքի երկրորդ,ավելի խոր աստիճանն է, երբ անձը կա-րող է կատարել ծանր հանգագործություններ:

Օգտագործվում են նաև վարքի շեղումներ արտահայտող այլ հասկացություններ. Հանցավոր վարք, անօրինական վարք , հակաիրավական,հակահասարակական վարք, հակապետական վարք նայլն: Նշված հոգեբանական օրինաչափությունները արտա-հայտում են շեղվող վարքի դինամիկան,շարժընթացը, աստիճանական զարգացումը , և դա տարիքի հետ այդքան էլ կապված չէ: Եթե այս կամ այն տարիքում է սկսվում վարքի շեղումը, միևնույն է՝ այդ փուլային զարգացումը անձը պետք է անցնի:Քանի-որ սոցիա-լական վարքը շեղվում է գլխավորապես այն անձի մոտ, որը չի տիրապետում իրեն, չի կարողանում կառավարել իր գործողությունները, չի կարողանում գնահատել իր արարք-ները ու դրանց հետևանքները:Մենք բավականին հանգամանալից քննարկեցինք և ուսումնասիրեցինք սոցիալական վարքի շեղումները,դրանց փուլերը: Սակայն պետք է նշել,որ վնասի կեսից հնարավոր է ետ կանգնել,եթե ունես ներքի ուժ, կամք և

շրջապատված ես քեզ շատ սիրող մարդկանցով: Ակամայից հիշեցի խորհրդային շրջանի ամենավաստակաշատ և տաղանդավոր ուսուցիչ Մակարենկոյին, որն առաջնորդվում էր «որքան կարելի է մեծ պահանջկոտություն մարդու նկատմամբ և որքան կարելի է մեծ հարգանք նրա նկատմամբ» սկզբունքով,Մակարենկոն կողմնակից էր չափավոր - կարգապահ դաստիարակությանը,չէր ընդունում բուրժուական չափից դուրս մեղմ դաստիարակությունը,որ բերում է մարդուն անորոշության,ծուլության: Դաստիարակության ամենալավ սոցիալական միջավայրը համարում էր առողջ կոլեկ-տիվը, ընտանիքը: Այս ամենի հետ Ես ըստ էության համաձայն եմ,քանի-որ մեր կյանքի մի ստվար մասը մենք անցկացնում ենք դպրոցական, աշխատանքայի կոլեկտիվներում ,

բնականաբար սոցիումը,սոցիալական միջավայրը շատ մեծ ազդեցություն է թողնում մարդու վարքագծի վրա: Առողջ կոլեկտիվը,բարի մարդիկ կարող են շեղվածին բերել ճիշտ ուղու վրա:Եվ հակառակը՝ վատ շրջապատը կարող է մարդուն ճահիճը գցել:Մի անգամ զբոսնելիս Մակարենկոյին է մոտենում մի երիտասարդ մայր,որն ուզում էր խորհուրդ հարցնել Մեծ մանկավարժից:«Ինչ եք կարծում ,երբվանից սկսեմ դաստիարակել երեխայիս,նա ընդամենը վեց ամսական է » :Պատասխանը չի ուշանում.«Տիկին,դուք 6 ամիս ուշացրել եք»:

Ինքնակառավարում և դրա հոգեբանական պայմանները:Ինքնակառավարումը անձի սեփական հույզերի,կրքերի, զգացմունքների, մտքի ու մտավոր գործողությունների, պահանջմունքների ու ցանկությունների, հոգեվիճակների, ներքի բարոյական արգելակ-ների կարգավորումն ու կառավարումն է:Ինքնակառավարման հիմքում ընկած է անձի ինքնավերահսկողությունը:Դա մարդու կողմից իր անձի ներքին պրոցեսների և արտաքին սոցիալական վարքի, հարաբերությունների և այլ դրսևորումների վրա հսկողությունն է՝ սեփական վարքը կարգավորելու և դրան ցանկալի ուղղվածություն հաղորդելու համար: Անձի ինքնակառավարումը ապահովում է նաև հետևյալ պայմանները. Ինքնաճանաչումը, ինքնագնահատականը, ինքնագիտակցությունը, ռեֆլեքսային ընդունակությունը:Բայց ինքնակառռավարման և ինքնահսկողության կարևոր հիմքերն են կազմում անձի բարո-յագիտակցությունը ու իրավագիտակցությունը, որոնք անձի վարքի, հարաբերություն-ների ու գործունեության բարձրագույն կարգավորիչներն են:Բարոյագիտակցությունը և

իրավագիտակցությունը մարդու գիտակցության մեջ բարոյական և իրավական սկզբունք-ների, նորմերի արտացոլումն է:Այսինքն՝ այն նորմերի գիտակցումը,որոնք կարգավորում են մարդկանց միջև ,մարդկանց և հասարակության միջև հարաբերությունները:Դա անձի հարգալից վերաբերմունքն է այդ նորմերի նկատմամբ և դրանց անհրաժեշտության գի-տակցումը:Ինքնակառավարվելու, սեփական զգացմունքները զսպելու,կամ հակառակը՝ թուլությունները ցույց տալու, և դրանից չամաչելու,մեր զգացմունքները ճիշտ հունի վրա դնելուն ունակ են միայն ուժեղ անհատները:Շատ ավելի հեշտ է զայրանալը, պոռթկալը, կարգը խախտելը:Մենք՝ հայերս ,ավելի շատ հակված ենք խախտել կանոնները,անզուսպ ենք, զգացմունքային,չենք սիրում ապրել կանոներով,որը չի զարդարում մեր ազգին: **Հարգե՛նք միմյանց**

## Եզրակացություն

Հետազոտական աշխատանքի ուսումնասիրության ամբողջ ընթացքում,վեր հանելով դեմ և կողմ տեսակետները,արտահայտելով շատ հարցերի շուրջ իմ սեփական մոտեցումները և կենսա-փորձը,իմ առջև նպատակ էի դրել վեր հանել անձի, անձնավորության և անհատականության, ժամանակակից մարտահրավերները:Որքան-որ ժամանակակից մարդը ավելի զարգացած է ավելի խելացի և զինված նոր գիտելիքներով,տեխնիկական դարաշրջանում մարդ անհատը դառնում է ավելի խոցելի և անպաշտպան,եթե չի հետևում դելֆյան գաղափարներին:

**« Ծանի՛ր զքեզ»**

Իմ առջև նպատակ էի դրել ,վեր հանելով մարդկային լավ և արատավոր կողմերն ու հատկանիշները,փնտրել,գտնել անձի կատարելագործման ուղիներ:Շատ հաճախ տարված լինելով աշխատանքային,մասնագիտական,տնտեսական,առօրեական բազմաբնույթ գործերով,մոռանում ենք ամենակարևորի՝մեր հոգու խնամքի,մեզ շրջապա-տող սիրելի և թանկ մարդկանց մասին:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1/Ս, Արզումանյան «Հոգեբանություն» 2003թ,

2/Հ, Խաչտրյան ,Կ,Վարդանյան «Հոգեբանություն»

3/Ս,Մանուսյան «Հոգեբանություն» 2017թ,